ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀԱԿՈԲՅԱՆ ՄԱՐԻԱՄ ԱՐԹՈՒՐԻ

ԱՄԵՐԻԿՅԱՆ ՆԵՈՌՈՄԱՆՏԻԶՄԻ ԳԵՂԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ՋԵՔ ԼՈՆԴՈՆԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Ժ. 01.07 «Արտասահմանյան գրականություն»
մասնագիտությամբ բանասիրական գիտությունների թեկնածուի
գիտական աստիճանի հայցման ատենախոսություն

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ-2025

Ատենախոսության թեման հաստատվել է ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտում

Գիտական ղեկավար՝ բ.գ.դ. պրոֆեսոր Գ. Վ. Եղիազարյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ բ.գ.դ պրոֆեսոր Կ.Ռ. Մատինյան

բ.գ.թ. դոցենտ Ա.Վ.Եգանյան

Առաջատար կազմակերպություն՝ Վ. Բրյուսովի անվան պետական համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը կկայանա 2025թ. հունիսի 30-ին, ժամը 14:30-ին, Երևանի պետական համալսարանում գործող ՀՀ ԲՈԿ-ի Արտասահմանյան գրականության 066 մասնագիտական խորհրդում (հասցեն՝ ք. Երևան, Ալեք Մանուկյան 1, ԵՊՀ-ի Եվրոպական լեզուների և հաղորդակցության ֆակուլտետի մասնաշենք, 422 լսարան:)

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ԵՊՀ գրադարանում

Սեղմագիրն առաքված է 2025թ. մայիսի 30-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար՝
բ.գ.թ. դոցենտ Ն. Կ. Գոնչար-Խանջյան

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Ամերիկյան նեոռոմանտիզմի գեղագիտության ձևավորման և զարգացման գործընթացի արտացոլումը Ջ. Լոնդոնի արձակում ունի բազմաբնույթ և բազմաբովանդակ դրսևորումներ: Լինելով վիպագիր, հրապարակախոս, լրագրող՝ Լոնդոնը, ինչպես ցանկացած մեծ գրող, ստեղծել է իր առանձնահատուկ գեղարվեստական աշխարհը: Լոնդոնի արձակի կարևորագույն կառուցվածքային բաղադրիչներների՝ գաղափարի, ձևի և գեղարվեստական հնարների միջոցով ձևավորվում է հեղինակի գեղարվեստական և արժեքաբանական հայեցակարգը:

Ժամանակակից գրականության պատմության մեջ Ջեք Լոնդոնն առաջիններից էր, ով դիտարկեց քաղաքակրթության զարգացման գործընթացը մարդկության պատմության շարունակականության հեռանկարում, մարդու փրկության որոնումները քաղաքակրթական և մշակութային փոխազդեցության պայմաններում, որոնք գլխավորապես ուղղված էին դեպի բնության աշխարհ: Լոնդոնի գեղարվեստական դիրքորոշման կիզակետում մարդու բնական էությունն է, որը պայմանավորված է նրա ստեղծագործություններում հումանիստական և բարոյական արժեքների առաջնահերթությամբ:

Հետազոտությունն **արդիական** է, քանի որ Լոնդոնի ստեղծագործությունների բովանդակային կիզակետում մարդկության ճակատագիրն է և հեղինակի առաջադրած գիտական փաստարկների վրա հիմնված այն խնդիրները, որոնք այսօր էլ առկա են և բարձրաձայնում են գլոբալիզացված քաղաքակիրթ աշխարհում մարդկության աստիճանական կործանման սպառնալիքի նախանշանների մասին: Ժամանակակից մարդուն քննելով *մարդ-բնություն-քաղաքակրթություն եռամիասնության համատեքստում*՝ հեղինակը բացահայտում է բնությունից հեռանալու վտանգները, հիմնարար արժեքների և ինքնության կորուստը, որոնք հնարավոր է պահպանել բնության հետ սերտ աղերսակցության միջոցով:

Ատենախոսության **արդիականությունը** պայմանավորված է այն փաստով, որ ամերիկյան նեոռոմանտիզմի՝ որպես առանձին գեղարվեստական հոսանքի զարգացման գործում Լոնդոնի ստեղծագործության դերի ու նշանակության հանդեպ հետաքրքրությունը ժամանակավրեպ չէ:

Մարդ-բնություն ներդաշնակության պահպանման դեպքում միայն մարդը կարող է գտնել հանգստություն, լիարժեքություն, ինքնաբավություն և վերադառնալ իրական ես-ին: Այս թեման, անշուշտ, բարձրաձայնում է ժամանակակից գլոբալիզացված աշխարհում մարդու ինքնության կորստի վտանգը:

Հետևաբար, Լոնդոնն առաջարկում է *բացառիկ նեոռոմանտիկ հերոսի* տեսլականը. նա այն հերոսն է, որը կարողանում է գոյատևել ծայրահեղ պայմաններում՝ համատեղելով ֆիզիկական ուժը, բանականությունը, բնազդները և դիմանալ ցանկացած փոփոխություններին: Նա մի կողմից ամուր կապված է բնությանը, մյուս կողմից՝ մշտական պայքարի մեջ է ներքին բնազդների և արտաքին վայրագությունների դեմ: Այս կերպարն արդիական է այսօր, քանի որ ժամանակակից մարդը կանգնած է մարտահրավերների առաջ՝ փորձելով գոյատևել սոցիալական ճնշումների, տեխնոլոգիական կախվածության և ներքին դատարկության պայմաններում: Լոնդոնի հերոսը՝ որպես տիպական նեոռոմանտիկ, այն իդեալն է, գրականության նոր հերոսը, որը վերագտնում է իր բնազդները, դիմադրում փոփոխություններին ու մնում ուժեղ ինչպես արտաքին, այնպես էլ ներքին պայքարում:

Հետազոտության **գիտական նորույթն** այն է, որ Ջեք Լոնդոնը՝ որպես նեոռոմանտիկ գրող, մինչ այժմ համակողմանիորեն ուսումնասիրված չէ, նրա նեոռոմանտիկ աշխարհահացքի մասին վերլուծություններ գրեթե չկան: Մեծ թվով ժամանակակից գիտական աշխատանքներում բավական մանրամասն վերլուծության են ենթարկվել Լոնդոնի վեպերն ու պատմվածքները, մինչդեռ հեղինակի

արձակում նեոռոմանտիկական տարրերի առկայության վերաբերյալ հիշատակում արվել է եզակի գիտական հոդվածներում՝ նշելով միայն «Հյուսիսային պատմվածքներ» ժողովածուն, ինչը, բնականաբար, բավարար չէ ամերիկյան նեոռոմանտիզմի խորքային դիտարկման համար: Նոր է նաև փորձը՝ համադրել տարբեր գրականությունների նեոռոմանտիկական դրսևորումները և ամերիկյան նեոռոմանտիզմի մշակութային առանձնահատկությունները՝ սոցիալ-պատմական համատեքստում:

Ատենախոսությունն ունի երկու **նպատակ.**

1. բացահայտել նեոռոմանտիզմի հիմնական առանձնահատկությունները՝ ընդգծելով դրա տեղն ու դերը համաշխարհային գրականության զարգացման գործընթացում,
2. ուսումնասիրել ամերիկյան նեոռոմանտիզմի առանձնահատկությունները՝ դրա տարբերությունը եվրոպական նեոռոմանտիզմից՝ շեշտադրելով ամերիկյան նեոռոմանտիզմի գլխավոր թեմաները, ինչպիսիք են մարդու և բնության հարաբերությունը, գոյապայքարը, ուժեղ անհատի գաղափարը, ինչպես նաև վերլուծել Ջեք Լոնդոնի դերը ամերիկյան նեոռոմանտիզմում՝ առանձնացնելով նրա ստեղծագործությունների հիմնական գեղագիտական ու գաղափարական բաղադրիչները և պարզել, թե ինչպիսի խորհրդանիշներ, նկարագրություններ և լեզվական միջոցներ է նա կիրառում՝ նեոռոմանտիկական աշխարհընկալումը փոխանցելու համար:

Աշխատանքի նպատակը պայմանավորել է ուսումնասիրության **խնդիրները՝**

- Ջեք Լոնդոնի երկերում քննել մարդ-բնություն և մարդ-քաղաքակրթություն փոխհարաբերություն,

- բացահայտել նեոռոմանտիկական քրոնոտոպները Ջեք Լոնդոնի արձակում՝ ուսումնասիրելով դրանց դերը ստեղծագործության իմաստաբանական համակարգում և կերպարի զարգացման գործընթացում,
- հետազոտել հերոսի աստիճանական զարգացումը, բացահայտել, թե ինչպես է միջավայրը ձևավորում անհատի հոգեբանական էվոլյուցիան և ինքնության բացահայտումը,
- հետազոտել մահվան և ազատագրման գաղափարը՝ Ջեք Լոնդոնի հերոսների համար մահը դիտարկելով որպես ճակատագրի դեմ պայքարի կամ ազատության վերջին միջոց,
- ուսումնասիրել կարոտաբաղձության, ավանդույթների, կրոնի դերը Լոնդոնի արձակում՝ բացահայտելով նրա ստեղծագործություններում առկա կրոնական և առասպելաբանական մոտիվները և դրանց փոխկապակցվածությունը նեոռոմանտիզմի գաղափարների հետ,
- վերլուծել «նոր կնոջ» կերպարը Ջեք Լոնդոնի ստեղծագործություններում՝ բացահայտելով, թե ինչպես են նրա հերոսուհիները միավորում կանացի և տղամարդկային ավանդական որակները՝ դառնալով ամերիկյան իդեալական կնոջ նոր կերպար:

Այս հարցերի պատասխանները հնարավորություն են ընձեռում ամբողջական պատկերացում կազմել Ջեք Լոնդոնի նեոռոմանտիկական գեղագիտության, քննարկվող թեմաների և գաղափարների մասին՝ ընդգծելով նրա դերը ոչ միայն ամերիկյան, այլև համաշխարհային գրականության մեջ:

Որպես աշխատանքի **տեսական-մեթոդաբանական հենք** առաջարկում ենք գրականության տեսաբանների, գրականագետների, կենսագիրների (Վ. Լուկով, Վ. Տոլմաչյով Մ. Հերզբերգ, Ք. Հենդրիքս, Ջ. Աուերբեք, Է. Լեյբոր, Ի. Սթոուն, Ի. Լունինա, Ն. Պախսարյան, Ն. Խաչատրյան և այլք) ներկայացրած հենքային դրույթները: Աշխատանքի մեթոբանական հենք են ծառայել նաև Ֆ. Նիցշեի

փիլիսոփայական, Չ.Դարվինի, Հ.Սփենսերի սոցիալական, Զ.Ֆրոյդի հոգեվերլուծական տեսություններում (մասնավորապես՝ երազների տեսություն, էդիպյան բարդույթ) ներկայացված հենքային դրույթները:

Աշխատանքում կիրառվել են համեմատական, հակադրական, պատմագրական-գրականագիտական, սոցիոմշակութային, հերմենևտիկ **մեթոդները:**

Հետազոտության **օբյեկտը** Ջ. Լոնդոնի այն ստեղծագործություններն են, որոնցում ամերիկյան նեոռոմանտիկ գրականության գեղագիտության ձևավորումը ստացել է ընդգծված և բովանդակալից դրսևորումներ:

Ուսումնասիրության **առարկան** ամերիկյան նեոռոմանտիզմի տարրերն ու առանձնահատկություններն են Ջ. Լոնդոնի երկերում: Ատենախոսության մեջ ներկայացված նյութերը կարող են օգտագործվել 19-20-րդ դարերի արտասահմանյան և ամերիկյան գրականության դասընթացների, թեմատիկ կամընտրական դասախոսությունների և սեմինարների անցկացման համար, որով պայմանավորված է **ատենախոսության գործնական նշանակությունը**:

Աշխատանքի **տեսական նշանակությունը** պայմանավորված է Ջ. Լոնդոնի ստեղծագործություններում նեոռոմանտիզմի գեղագիտության խորը վերլուծությամբ, որը գրականագիտական դաշտում կարող է հիմք ծառայել նեոռոմանտիզմի վերաբերյալ հետագա ուսումնասիրությունների համար:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսությունը բաղկացած է **ներածությունից, երեք գլուխներից, եզրակացությունից և գրականության ցանկից:**

Ներածության մեջ ներկայացվում են ատենախոսության գիտական նորույթը, արդիականությունը, նպատակներն ու խնդիրները, առարկան, օբյեկտը, տեսագործնական նշանակությունը, մեթոդները:

Ատենախոսության առաջին գլուխը, որը վերնագրված է «**Ամերիկյան նեոռոմանտիզմի առաջացման նախադրյալները**», նվիրված է նեոռոմանտիզմի առաջացման, պատմության վերլուծությանը, ինչպես նաև անդրադարձ է արվում տարբեր գրականություններում նեոռոմանտիզմի դրսևորումներին:

1.1 Նեոռոմանտիզմի առաջացումը որպես գրական հոսանք

Ներկայացվում են գրական տեսաբանների առաջադրած դրույթները նեոռոմանտիզմի՝ որպես գրական հոսանքի վերաբերյալ: Անդրադարձ է արվում հատկապես ֆրանսիական, անգլիական և ռուսական գրականության մեջ նեոռոմանտիզմի դրսևորումներին և առանձնահատկություններին: Ներկայացվում են նեոռոմանտիզմի աշխարհայացքային հիմնական ընկալումները, ժանրային, թեմատիկ, կերպարաստեղծման առանձնահատկությունները:

1.2 Ամերիկյան նեոռոմանտիզմի առանձնահատկությունները

Այս ենթագլխում ներկայացվում են ամերիկյան նեոռոմանտիզմի սկզբնավորման մասին տեսական ընկալումները: Քննության են առնվում ամերիկյան նեոռոմանտիզմի ներկայացուցիչների հիմնական ստեղծագործությունները, դրանց աշխարհայացքային, ժանրային այն առանձնահատկությունները, որոնք բնորոշում են նշված գրական

հոսանքը: Զուգահեռներ են տարվում անիմալիստական գրականության, կենսաբանական դետերմինիզմի և ամերիկյան նեոռոմանտիկ գրականության միջև՝ առանձնացնելով դրանց տարբերակիչ հատկանիշները: Վերլուծվում են Է.Ս. Թոմփսոնի անիմալիստական պատմվածքները, որոնցում շեշտը դրվում է ամերիկյան նեոռոմանտիզմի հետ առնչություն ունեցող այնպիսի թեմաների վրա, ինչպիսիք են կենդանիների գոյության պայքարը, մահ-ազատագրումը և այլն: Ջեք Լոնդոնի ստեղծագործության մեջ ամերիկյան նեոռոմանտիզմի տարրերը համեմատվում են Է.Ս. Թոմփսոնի պատմվածքներում ներկայացված նեոռոմանտիկ տարրերի հետ:

Ատենախոսության երկրորդ գլուխը վերնագրված է **«Մարդ-բնություն-քաղաքակրթություն շղթան Ջ. Լոնդոնի նեոռոմանտիկական ստեղծագործություններում»**: Այս գլխում քննության են առնված մարդ - կենդանի փոխհարաբերությունները, բնություն - քաղաքակրթություն առնչությունը նեոռոմանտիզմի գեղագիտության շրջանակներում:

2.1 Բնության՝ «սպիտակ լռության» նեոռոմանտիկական մեկնաբանությունը «Հյուսիսային պատմվածքներում

Այս ենթագլխում ներկայացվում է բնության գեղագիտությունը Ջ.Լոնդոնի Հյուսիսային պատմվածքներում, բնապատկերի գեղարվեստական գործառույթը տեքստում, քննվում են «սպիտակ լռություն» հասկացության դրսևորումները Ջ. Լոնդոնի գեղարվեստական արձակում, մարդու գոյապայքարը ռեալիստական և նեոռոմանտիկական գեղագիտության առնչության համատեքտում:

2.2 Նեոռոմանտիկական մոտիվները և անհատի գոյապայքարը «Հարավային ծովի պատմվածքներում» և «Արկած» վեպում

Այս ենթագլխում քննության են առնվում «Հարավային ծովի պատմվածքները» և «Արկած» վեպը՝ որպես նեոռոմանտիկ

գրականության լավագույն նմուշներ: Հարավային ծովի պատմություններում ներառված են գաղութատիրության ազդեցության ու մշակութային բախման թեմաները, որոնցում առկա են այնպիսի նեոռոմանտիկական տարրեր, ինչպիսիք են *հերոսականությունն ու անհատապաշտությունը, բնության գերակայությունը, անորոշության և գաղտնիքի մթնոլորտը, կրոնական և ավանդական հակադրությունները և կարոտաբաղձությունը*:

«Հարավային պատմվածքների» իրավահավասարության և հումանիստական արժեքների վերհանման թեմատիկան առկա է նաև «Արկած» վեպում, որում քաղաքակրթության և վայրի բնության հակադրությունը ցուցադրվում է կղզու և դրա բնակիչների միջոցով: Կղզու տոպոսը հակադրությունների վայր է, որում բախվում են քաղաքակրթությունն ու բնությունը, բնիկներն ու գաղութատերերը, կարգուկանոնն ու քաոսը:

2.3 Մարդ-կենդանի աղերսները Ջեք Լոնդոնի «Սպիտակ ժանիք» և «Նախնիների կանչը» անիմալիստական վեպերում

Նշված վեպերում նեոռոմանտիզմն արտահայտվում է մի քանի առանցքային գաղափարներով. կյանքի և մահվան պայքար, բնության գերակայություն, վերադարձ դեպի բնություն, մարդ-կենդանի ներքին կապ, որոնց հիմքում ընկած է այն գաղափարը, որ մարդն ու կենդանին ունեն ընդհանուր բնույթ և հավասարապես ենթարկվում են բնության օրենքներին:

«Սպիտակ ժանիք» և «Նախնիների կանչը» անիմալիստական վեպերում բնության և քաղաքակրթության սահմանագծին կանգնած է կենդանի-հերոսը, որի ապրումներն ու վարքային դրսևորումներն ուղղակիորեն պայմանավորված են մարդու ներգործությամբ:

2.4 Բնության և քաղաքակրթության բախումը Ջեք Լոնդոնի «Լուսնի հովիտ» և «Բոցավառ արշալույսը» վեպերում»

Նշված երկու ստեղծագործությունների վերլուծությամբ ներկայացվում է բնություն-քաղաքակրթություն հակադրությունը

որպես նեոռոմանտիզմի գեղագիտության դրսևորում՝ հերոսների «փախուստը» հասարակական կյանքից դեպի բնություն, վերադարձը բնության նախասկիզբ, ինքնության վերագտնումը բնության միջոցով:

Վեպերը նեոռոմանտիզմի կարևոր սկզբունքներից մեկի՝ բնության և մարդու միասնության գաղափարի վառ արտահայտությունն են: Հեղինակը քննադատում է աշխարհի անարդարությունն ու անհավասարությունը՝ ցույց տալով, որ իրական արժեքները գտնվում են քաղաքակրթությունից դուրս՝ պարզ, ինքնաբավ կյանքում:

Ատենախոսության երրորդ գլուխը՝ «Բացառիկ հերոսի նեոռոմանտիկական մեկնաբանությունը Ջեք Լոնդոնի վեպերում», նվիրված է բացառիկ նեոռոմանտիկ հերոսի վերլուծությանը Ջ. Լոնդոնի վեպերում:

3.1 Ուժեղ հերոսի նկարագիրը «Լուսնի հովիտ», «Երկաթե կրունկ», «Ծովագայլը» վեպերում

Այս վեպերում ներկայացվում է ուժեղ անհատի կերպավորումը և ընգծվում է ռոմանտիկ հերոսի և նեոռոմանտիկ բացառիկ հերոսի տարբերությունը, որի հիմնական դրսևորումներից մեկը «փոքր մարդու» հերոսականացումն է սոցիալական միջավայրում: Ուժեղ, կամային անհատի կերպավորման համատեքստում մեկնաբանվում են նավի և քաղաքի տարածական տոպոսները, ինչպես նաև անդրադարձ է արվում «Ծովագայլը» վեպի գլխավոր հերոս Լարսենի և Նիցշեի գերմարդու փիլիսոփայության աղերսներին նեոռոմանտիզմի համատեքստում:

«Լուսնի հովիտ», «Ծովագայլը» և «Երկաթե կրունկ» վեպերում ուժեղ հերոսի նեոռոմանտիկական մեկնաբանության հիմքում ընկած է ֆիզիկական և մտավոր գերազանցությունը, բնության և հասարակության միջև անդադար պայքարը: Նշված վեպերի հերոսները բացառիկ անհատներ են, որոնք խախտում են

հասարակական ստանդարտները՝ ընդգծելով իրենց անձնական ազատությունն ու ուժը: Լոնդոնի հերոսները գործում են այնպիսի միջավայրերում, որտեղ բախվում են քաղաքակրթությունն ու բնությունը, և հենց այդ բախումն է նրանց դարձնում ուժեղ և հաղթող:

3.2 Մտքի ճամփորդությունը որպես ազատագրվելու միջոց «Զսպաշապիկը» վեպում

Այս ենթագլխում քննվում է նշված գիտաֆանտաստիկ վեպում նկարագրվող ճամփորդությունը՝ որպես հոգևոր մաքառման, իրականությունից փախուստի, ազատության հասնելու միջոց: «Զսպաշապիկը» կամ «Միջաստղային թափառականը» վեպում նեոռոմանտիկական տոպոսը զսպաշապիկն է: Գլխավոր հերոս Դարել Սթենդինգի պայքարը ո՛չ բնության, ո՛չ քաղաքակրթության, ո՛չ էլ հասարակության դեմ է: Նրա մտավոր ճամփորդությունները ներկայացնում են յուրահատուկ քրոնոտոպ՝ ժամանակի և տարածության փոխկապակցվածություն, որը թույլ է տալիս հերոսին ապրել տարբեր դարաշրջաններում և մարմնավորել տարբեր կյանքեր: Վեպում քրոնոտոպն արտահայտվում է հերոսի հոգևոր ճամփորդություններով, որտեղ բանտախցի սահմանափակ ֆիզիկական տարածությունը հակադրվում է անվերջ հնարավորությունների աշխարհին, որը նա բացահայտում է իր մտքի միջոցով: «Զսպաշապիկը» վեպում առկա մտքի բազմակի պատկերավոր ճամփորդությունների նկարագրությունները ներառում են նեոռոմանտիկական հետևյալ հիմնական առանցքային առանձնահատկությունները՝ *ֆիզիկական և հոգևոր պայքար, անհատի գերակայություն ճնշող հասարակության նկատմամբ, ինքնաբացահայտման ճանապարհ:* Այս առանձնահատկությունները վեպը տեղադրում են ամերիկյան նեոռոմանտիզմի համատեքստում՝ ընդգծելով մտքի ճամփորդությունը՝ որպես գոյատևման միջոց, մարդու կամքի հաղթանակը, մարգինալացված հերոսի պայքարը և ազատության անսահման հնարավորությունը:

3.3 Մահ-ազատագրումը «Մարտին Իդեն» և «Մեծ տան փոքրիկ տիրուհին» վեպերում

Այս վեպերում ներկայացվում է մահվան փիլիոսոփայությունը՝ հերոսների ընտրության օրինակով, որոնց համար մահն ազատագրման միջոց է: Նեոռոմանտիկ գրականության մեջ մահը հաճախ ընկալվում է ոչ թե որպես վախի աղբյուր, այլ որպես կյանքի բնական ավարտ, որը պետք է ընդունել արժանապատվորեն: Սա խորհրդանշում է ոչ միայն ֆիզիկական մահը, այլև վերածննդի կամ ազատագրման գաղափարը: «Մարտին Իդենում» մահը ներկայացվում է ոչ թե որպես ողբերգական ավարտ, այլ որպես խզում մի աշխարհից, որը հերոսն այլևս չի կարողանում ընդունել: Նա դուրս է գալիս սեփական գոյության սահմաններից, քանի որ հասնում է այն գիտակցության, որ աշխարհն ու արժեքները կորցնում են իրենց իմաստը: Կյանքի վերջին պահին նա ցավ չի զգում. մահն ավելի շուտ խաղաղություն է, ազատագրում, քան ողբերգություն:

«Մեծ տան փոքրիկ տիրուհին» վեպում ևս մահը ներկայացվում է որպես ինքնակամ ազատագրում: Վեպի գլխավոր հերոսուհի Պաոլան, լինելով ուժեղ և անկախ անհատ, վերջնականապես գտնում է իր ազատագրումը մահվան միջոցով: Նրա ընտրությունը՝ ինքնաոչնչացմամբ լուծել ներքին պայքարը, համապատասխանում է ամերիկյան նեոռոմանտիկ գրականությանը բնորոշ այն գաղափարախոսությանը, որ ազատությունն ու ինքնորոշումը երբեմն ձեռք են բերվում կյանքի վերջին ակնթարթում:

3.4 «Նոր կնոջ» հայեցակարգը Ջ. Լոնդոնի նեոռոմանտիկական վեպերում»

Իր վեպերում և պատմվածքներում Լոնդոնն առաջարկում է «*նոր կնոջ տեսակ», «նոր կնոջ հայեցակարգ», «կանացիության»* նոր դրսևորում: Ներկայացվում են հատկապես Ֆրոնայի Ուելսի («Ձյունների դուստրը»), Դիդ Մեյսոնի («Բոցավառ արշալույսը»), Մոդ Բրուստերի («Ծովագայլը») («Երկաթե կրունկ»), Ջեյն Լեքլենդի («Արկած»), Սաքսոն

Ռոբերտսի («Լուսնի հովիտ») կերպարները՝ որպես գրականության «նոր կնոջ» օրինակեր: Ելնելով նշված կին կերպարներին բնորոշ ընդհանուր հատկություններից՝ «նոր կինը» քայլում է ժամանակին համընթաց, որպեսզի արժանի լինի «ժամանակակից տղամարդուն», այլ բառերով՝ լինի ոչ թե տանը ամուսնուն սպասող առաքինի անձ՝ մոռանալով սեփական ես-ի ձգտումներն ու պահանջմունքները, այլ՝ համահավասար զուգընկեր կյանքի բոլոր պահերին:

Այսպիսով, ուսումնասիրելով Ջեք Լոնդոնի արձակում առկա ամերիկյան նեոռոմանտիզմի գեղագիտության ձևավորումը՝ հանգում ենք հետևյալ **եզրակացություններին՝**

1. 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին որպես գրական ուղղություն ձևավորված նեոռոմանտիզմում առաջնային էին անհատի ներաշխարհի, ճակատագրի դեմ պայքարի, բնության հետ ներդաշնակ գոյակցության և հերոսականության գաղափարը: Ամերիկյան նեոռոմանտիզմն առանձնանում է իր յուրահատուկ մոտեցմամբ, որը մեծապես հիմնված է մարդու կողմից բնության ուժերի հաղթահարման և անհատի անկախության գաղափարների վրա:
2. Ջեք Լոնդոնը՝ որպես ամերիկյան նեոռոմանտիզմի ներկայացուցիչ, իր ստեղծագործություններում վեր է հանում բնության և քաղաքակրթության հակամարտության, հերոսի կամքի ուժի և ճակատագրի դեմ անհաշտ պայքարի թեմաները:
3. Ջեք Լոնդոնի հյուսիսային և հարավային պատմություններն առանձնանում են բնության նեոռոմանտիկական մեկնաբանությամբ, որտեղ հերոսների ճակատագրերն անմիջականորեն պայմանավորված են բնության տարերքներով:
4. Ջեք Լոնդոնի հերոսներն ու հերոսուհիները մարմնավորում են ամերիկյան նեոռոմանտիզմի «գերմարդու» կերպարը, որը հակադրվում է հասարակական նորմերին, պայքարում

բնության ու ճակատագրի դեմ, սակայն հաճախ միայնակ է, և իր ուժը դառնում է կա՛մ հաղթանակի, կա՛մ կործանման պատճառ:

5. Ջեք Լոնդոնի արձակը լի է նեոռոմանտիկական տիպական տոպոսներով, որոնք ընդգրկում են ծովը, հսկայական տունը, ձյունածածկ հյուսիսը, կղզիները, բանտախուցը և քաղաքակրթված աշխարհի ճնշող միջավայրը:
6. Ամերիկյան նեոռոմանտիզմի կարևոր բաղադրիչներից մեկը հիշողություններն են, անցյալի վերհուշը, կարոտաբաղձությունը, որոնք հաճախ արտահայտվում են հերոսների անցյալի կարոտի, կորուսյալ ազատության, կամ վաղեմի ավանդույթների պահպանման ցանկության միջոցով: Ջեք Լոնդոնի ստեղծագործություններում հիշողությունը հաճախ հանդես է գալիս որպես հերոսների ինքնության ձևավորման հիմնական տարր՝ քաղաքակրթությունից դուրս գտնվող պարզ աշխարհի կարոտ:
7. Ջեք Լոնդոնն իր արձակում ձևավորում է «նոր կնոջ» հայեցակարգը: Լոնդոնի կին կերպարները թե՛ ֆիզիկական, թե՛ մտավոր ուժով, ունեն անկախության ձգտում և վճռականություն, ինչը նրանց առանձնացնում է կանանց ավանդական կերպարներից:
8. Լեզվաոճական առանձնահատկությունները Լոնդոնի գրականության հիմնաքարերից են: Նմանատիպ ոճական հնարքներն օգնում են ընթերցողին առավել խորությամբ ընկալել հերոսների հոգեվիճակը, բնության և մարդու միջև առկա պայքարը: Ջեք Լոնդոնը լայնորեն օգտագործում է խորհրդանիշներ՝ ներկայացնելու իր գաղափարները: Գայլը («Նախնիների կանչը», «Սպիտակ ժանիք») խորհրդանշում է բնազդային կյանքն ու ազատությունը, ծովը ՝ կյանքի անողոքությունն ու հերոսական պայքարը նավը՝

սահմանափակ տարածության մեջ գոյության պայքարը («Ծովագայլը»), երկաթե գարշապարը («Երկաթե կրունկ»)՝ բռնապետության դաժանությունը, տունը՝ («Մեծ տան փոքրիկ տիրուհին»)՝ նյութական բարեկեցության և կայունության պատրանքը, որը, սակայն, չի կարող ապահովել հոգևոր ներդաշնակություն և իրական երջանկություն:

9. Ջեք Լոնդոնի ստեղծագործություններն առանձնանում են նեոռոմանտիկական գեղագիտությամբ, որը ներառում է բնության վեհության պատկերումը, հերոսականության գովերգումը, խորհրդապաշտական մոտիվներն ու խորը իմաստային շերտերը:

Այսպիսով, Ջեք Լոնդոնի ստեղծագործությունները, լինելով ամերիկյան նեոռոմանտիզմի վառ օրինակներ, մեծապես նպաստել են այս ուղղության ձևավորմանն ու զարգացմանը՝ ընդգծելով գոյատևման, բացառիկ անհատի, բնության ու քաղաքակրթության հավերժական բախման թեմաների կարևորությունը:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՅՈՎ ՀՐԱՏԱՐԱԿՎԱԾ ՀՈԴՎԱԾՆԵՐ

1. Մարդ-կենդանի աղերսները Ջ. Լոնդոնի երկերում, ԲՊՀ, Բանբեր Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանի, 1(58), Երևան 2021, էջ 253-262:

2. Գերմարդու գոյատևման խնդիրը Ջ. Լոնդոնի «Ծովագայլը» վեպում, ԲՊՀ, Բանբեր Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանի, 1(60), Երևան 2022, էջ 167-177:

3. Ուժեղ հերոսի նեոռոմանտիկական նկարագիրը «Լուսնի հովիտ» և «Ծովագայլը» վեպերում, Երևան քաղաքում Մոսկվայի Մ.Վ. Լոմոնոսովի անվան պետական համալսարանի մասնաճյուղ, «Ռուսագիտության արդի հիմնախնդիրները» գիտամեթոդական հանդես, 9(13), Երևան 2022, էջ 225-233:

4. Մարդ - քաղաքակրթության հակամարտության արդիականությունը Ջ. Լոնդոնի նեոռոմանտիկական վեպերում, ԵՄՀ, Բանբեր Եվրասիա միջազգային համալսարանի, Երևան 2024 (1), էջ 188-198:

5. Կանացիությունը և նոր կնոջ հայեցակարգը Ջեք Լոնդոնի նեոռոմանտիկական վեպերում, ԵՄՀ, Բանբեր Եվրասիա միջազգային համալսարանի, Երևան 2024 (2), էջ 215-226:

6. «Սպիտակ լռություն» այլաբանությունը նեոռոմանտիզմի համատեքստում (Ջ. Լոնդոնի հյուսիսային պատմվածքների հիման վրա), ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտ, Գրականագիտական հանդես, ԻԸ-2, Երևան 2024, էջ 211-221:

7. Ամերիկյան նեոռոմանտիզմի առաջացման նախադրյալները, ԵՊՀ, «Օտար լեզուները բարձրագույն դպրոցում» գիտական հանդես, Vol.28 N 2(37),Երևան 2024, էջ 192-212:

MARIAM HAKOBYAN

THE FORMATION OF THE AESTHETICS OF AMERICAN NEOROMANTICISM IN THE WORKS OF JACK LONDON

Dissertation for the Degree of Candidate of Philological Sciences in the Specialty 10.01.07. – "Foreign literature".

The defense of the dissertation will take place on 30.06.2025 at 14:30 at the HQC of RA's Specialized Council 066 of "Foreign Literature" in Yerevan State University (address: Yerevan, Aleq Manukyan 1, YSU, 7th building, Faculty of European Languages and Communication, room 422)

SUMMARY

The dissertation is devoted to the study of the formation of the aesthetics of American neoromanticism in Jack London's prose.

The relevance of the dissertation is conditioned by the fact that problems concerning the threat of the gradual destruction of humanity in the globalized civilized world put forward by J. London are relevant today.

The scientific novelty of the research lies in the fact that Jack London, as a neoromantic writer, has not been comprehensively studied so far, and the research of his neoromantic worldview in literary sources is insufficient.

The objectives of the dissertation are:

1. to identify the main features of neoromanticism, emphasizing its place and role in the development of world literature,
2. to study the features of American neoromanticism, its difference from European neoromanticism, focusing on the main themes of American neoromanticism, as well as to analyze the role of Jack London in American neoromanticism, distinguishing the main aesthetic and ideological components of his works.

The object of the research is the works of J. London, in which the formation of the aesthetics of American neo-romantic literature received fundamental and meaningful manifestations.

The dissertation consists of Introduction, three chapters, Conclusion and the List of literature.

The first chapter-The Prerequisites for the Emergence of American Neoromanticismis devoted to the analysis of the emergence and history of neoromanticism. the manifestations and features of neoromanticism in French, English and Russian literature as well as the theoretical perceptions about the origins of American neoromanticism. E.S.Thompson's animalistic stories are analyzed, and the presence of elements of American neoromanticism in Jack London's work is discussed, comparing them with E.S.Thompson's stories.

The second chapter – The Man-Nature-Civilization Chain in the Neoromantic Works of J. London examines the aesthetics of nature and the artistic function of landscape in J. London's northern stories, examines the heroism and individualism, the supremacy of nature, the atmosphere of uncertainty and mystery, religious and traditional contrasts and nostalgia in the Southern stories and the novel "Adventure". The struggle for life and death, the return to nature, the inner connection between human and animal are studied in J. London's animalistic novels "White Fang" and "The Call of the Wild", and the analysis of the works "Moon Valley" and "Burning Daylight" presents the nature-civilization contrast as a manifestation of the aesthetics of neoromanticism.

The third chapter - The Neoromantic Interpretation of the Exceptional Hero in the Novels of Jack Londonis devoted to the analysis of the exceptional hero in the neoromantic novels "Moon Valley", "Iron Heel", "The Sea Wolf". The chapter also examines the theme of the journey of the mind as a means of liberation in the novel "The Straitjacket", the theme of death-liberation in the novels "Martin Eden" and "The Little Lady of the Big House", and also presents the concept of the "New Woman" in the neo-romantic novels of J. London.

In the **Conclusion** the main outcomes of the research are presented.

МАРИАМ АКОПЯН

ФОРМИРОВАНИЕ ЭСТЕТИКИ АМЕРИКАНСКОГО НЕОРОМАНТИЗМА В ТВОРЧЕСТВЕ ДЖЕКА ЛОНДОНА

Диссертация на соискание ученой степени кандидата филологических наук по специальности 10.01.07. – «Иностранная литература».

Защита диссертации на соискание ученой степени кандидата филологических наук состоится 30.06.2025 года в 14:30 на заседании специализированного совета 066 ВАК (“ Зарубежная литература”), действующего в Ереванском государственном университете, по адресу г. Ереван, ул. А. Манукяна 1, ЕГУ, 7-й корпус, факультет Европейских языков и коммуникации, аудитория 422.

РЕЗЮМЕ

Диссертация посвящена исследованию формирования эстетики американского неоромантизма в прозе Джека Лондона.

Актуальность диссертации обусловлена тем, что проблемы, основанные на научных аргументах, выдвинутых Дж. Лондоном, актуальны и сегодня и говорят о признаках угрозы постепенного уничтожения человечества в глобализированном цивилизованном мире.

Научная новизна исследования заключается в том, что исследование его неоромантического мировоззрения в литературных источниках недостаточно.

В работе поставлены две основополагающие **цели:**

1. определить основные черты неоромантизма, подчеркнув его место и роль в развитии мировой литературы,
2. представить особенности американского неоромантизма, его отличие от европейского неоромантизма, а также проанализировать роль Джека Лондона в американском неоромантизме, выделив основные эстетические и идеологические компоненты его произведений, определив, какие символы и описания он использует для передачи неоромантического мировоззрения.

Предметом исследования является творчество Дж. Лондона, в котором формирование эстетики американской неоромантической литературы получило фундаментальные и содержательные проявления.

Диссертация состоит из введения, трех глав, заключения и списка литературы.

Первая глава – «Предпосылки возникновения американского неоромантизма» посвящена анализу возникновения и истории неоромантизма, проявлениям и особенностям неоромантизма во французской, английской и русской литературе, а также теоретическим представлениям об истоках американского неоромантизма.

Вторая глава – «Человек-природа-цивилизация в неоромантических произведениях Дж. Лондона» посвящена эстетике природы и художественной функции пейзажа в Северных рассказах, рассматриваются героизм и индивидуализм, превосходство природы, религиозные и традиционные контрасты и ностальгия в Южных рассказах и романе «Приключение». Возвращение к природе, внутренняя связь человека и животного исследуются в анималистических романах «Белый клык» и «Зов предков», а анализ произведений «Лунная долина» и «Время-не-ждёт» представляет контраст природа-цивилизация как проявление эстетики неоромантизма.

Третья глава – «Неоромантическая интерпретация исключительного героя в романах Джека Лондона» посвящена анализу исключительного неоромантического героя в романах «Лунная долина», «Железная пята», «Морской волк». «Смирительная рубашка», «Мартин Иден», «Маленькая леди большого дома».

В **Заключении** подводятся научные выводы исследования.